ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և
Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարության միջև

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

նպատակ հետապնդելով և ցանկություն հայտնելով երկու երկրների միջև փոխադարձ վստահության, հավասարության ու փոխշահավետության սկզբունքների վրա հիմնված համագործակցություն զարգացնել ռազմատեխնիկական բնագավառում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Զարգացնել համագործակցություն բոլոր հնարավոր ուղղություններով, որոնք կամրապնդեն երկու երկրների պաշտպանական ներուժը՝ իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան:

Կողմերը կիրականացնեն սույն Համաձայնագրով սահմանված իրենց պարտականությունները՝ չխախտելով երկու երկրների կողմից այլ երկրների հետ կնքված միջազգային համաձայնագրերը, և գործող միջազգային օրենքներն ու համաձայնագրերը:

ՀՈԴՎԱԾ 2
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Կողմերը ռազմատեխնիկական համագործակցություն են իրականացնում հետևյալ բնագավառներում և ուղղություններով.

- ռազմական գիտության և տեխնիկական զարգացման հարցերով փորձի փոխանակման,
- գիտատեխնիկական համատեղ հետազոտությունների,
- ռազմական և տեխնիկական անձնակազմերի որակավորման:

Կողմերը փոխադարձ պայմանավորվածության դեպքում կարող են համագործակցել նաև այլ բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 3
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի իրագործման համար Կողմերը նշանակում են երկու երկրների պաշտպանության նախարարություններին, որպես Լիազորված մարմիններ:

Նշված երկու նախարարությունների միջև համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով՝

- փոխադարձ պաշտոնական և աշխատանքային այցերի և խորհրդատվությունների,
- տեխնիկայի և զորավարժությունների ցուցադրման նպատակով փոխադարձ այցելությունների,
- համագործակցության ոլորտներին համապատասխան համատեղ աշխատանքային խմբերի ստեղծման,
- ռազմադիվանագիտական խողովակներով փաստաթղթերի և տեղեկատվության փոխանակման:

ՀՈԴՎԱԾ 4
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Համաձայնագրի դրույթներն իրագործելիս Կողմերը կապահովեն երկու կողմերի միջև փոխանակված տեղեկատվության ամբողջական գաղտնիությունը:

Կողմերն առանց մյուս Կողմի նախնական թույլտվության ֆիզիկական կամ իրավաբանական անձանց չեն փոխանցի կամ վաճառի համագործակցության շրջանակներում ձեռք բերված տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ 5
ԼՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Համաձայնագրի մեջ լրացումներ ու փոփոխություններ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, և դրանք ուժի մեջ կմտնեն միայն գրավոր ձևակերպումից, երկու Կողմերի ստորագրումից և սահմանված կարգով համապատասխան մարմինների կողմից վավերացումից հետո:

ՀՈԴՎԱԾ 6
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկու Կողմերի համապատասխան մարմինների կողմից վավերացման մասին վերջին գրավոր ծանուցման պահից, հինգ տարի ժամկետով: Նրա գործողությունն ինքնաբերաբար կերկարաձգվի յուրաքանչյուր անգամ մեկ տարի ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի դրա վերանայման կամ գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է ք.Դամասկոսում 2001 թ. Օգոստոսի "27" – ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման տարբերության դեպքում Կողմերը ղեկավարվում են անգլերեն տեքստով:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից	Սիրիայի Արաբական Հանրապետության Կառավարության կողմից
Ա.Ասլանյան	